

Յաստուածապաճ գաւառիս Լաւոյ, ի յերկնագէտ, մեծարգոյ եւ ի գերահռչակ ուխտի Սանահին վերաձայնելոյ... Յիշեցէք... զտէր Կիրակոս կաղմող, եւ զանպիտանս յամենայնի զՅոհանէս, որ յոյժ աշխատեցաք ի գիր եւ ի ծաղիկ եւ ի համարար բառսն... Այլ եւ սղալանաց եւ խոշորութեան գրոյս անմեղադիր լերուք, զի այս էր կար մեր ի ժամ ծերութեան»։

Զեռագրի վերջում գտնուում է մի մագաղաթեայ պահպանակ (Ժ. դարի դրոշմ ունի), առաջին էջի վրայ բարձրորակ եղծած մանրանկարը պատկերում է Յիսուսի մուտքը Երուսաղէմ։ Իշու վրայ նստած Գրիստոսի կերպարը եւ առաջից ներք գլիմաւորողները, որոնք ճանապարհին ըզգեստներ են փոռում, ինչպէս նաեւ ուղեկիցները, գծւած են հմուտ վրձինով։

Ահա սրանք են Յովհաննէս Սանահնեցու գրչական եւ մանրանկարչական մշակոյթի մեզ ծանօթ վաստակները, որոնք հայ արւեստի պատմութեան համար արժէքաւոր վաւերագրեր են եւ նկարչի պայծառ յիշատակը վառ են պահում գեղարւեստասէրների սրտերում։

Մի հանգամանք անժխտելի է, որ Յովհաննէս Սանահնեցին իր գեղարւեստական գործունէութեան ընթացքում օգտւելով հայ գրչական եւ մանրանկարչական հին

մշակոյթի հարստութիւններից, կերտել է նկարչական արւեստի ուշագրաւ գործեր։ Ուշագրութեան արժանի են նրա վրձինած կերպարները եւ ոճային երանգաւորումները, որոնք ձեզ ցայտուն պաղափար են տալիս վաստակաւոր նկարչի արւեստի էութեան եւ Սանահնի մանրանկարչական դպրոցի գեղարւեստական առանձնատկութիւնների մասին։ Առհասարակ, Յովհաննէս Սանահնեցին ձեզ դրաւում է իր ձեւակերպւած վրձինով եւ ինքնատիպ ոճով։ Այդ հիմնական յատկանիշներով էլ նա ԺԵ. դարի հայ գրչական եւ նկարչական արւեստների պայծառ դէմքերի շարքում ուրոյն տեղ է դրաւում(*)։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

4 փետր. 1957

Ռաշտ

(*) Աղբիւրներ. — Գարեգին եպ. Սրբանձատեանց, «Գրոց բրոց». Գարեգին եպ. Յովսէփեան, «Գրութեան արւեստը հին հայոց մէջ». Հ. Ղեւոնդ Ալիշան, «Սիսական». Լ. Ս. Խաչիկեան, «ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ». Նորայր եպ. Պողարեան, «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց» եւ այլն։ Ար. Եր.

ՈՂԲ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԿԱՖԱՅՈՒ

Ինչն հարիւր Հայոց թուին,
ԻԳ (24)ն էր աւելին, (1475)
Ի յաստմանէ մեղաց չարին,
միաբանեցան այն տաճկնին։
Թաթարն եկաւ ի վերայ Կաֆին,
ջրեր զամէնն կտրեցին,
Կրուի տըւին հետ քաղաքին,
եւ շատ արիւն յերկիր հեղին։
Յետոյ եկին զատրըղանին,
որ ԴՃ (400) էր աւելին,
եւ միաբան ի դուրս ելին,
գլխափայ քաղաքն բոլորեցին։
Բաղում 'ւ անթիւ էր հեծելին,
թօփ ու թուփանք շատ ունէին,
Խիստ կանչելով կուլ գային,
որ ահ նստեր ի վերայ քաղքին։
Մեծ մեծ թօփերն երբ քաշէին,
երկինք 'ւերկիր կու գողային,
Խիստ շատ վնաս եղեւ քաղքին,
տուն եւ տաճարքն փլուչէին։
Տըղայք մեռան յահէ ձայնին,
կանայք յահէն զարհուրէին,
եւ ըզտըղայսն անցուցանէին,
զի ահեղ էր ձէնն մեծ թօփին։
Ի հինգ աւուրն զքաղաքն առին,
եւ սուտ երգումն աստ արարին,
Յետոյ զքաղաքն ի գիր առին,
ըզմանր ու գմեծն գրեցին։
Զինչ որ ճէպայեարախ կային,
զամէնն ի քաղաքէն ժողովեցին,
Զնետ ու զաղեղ եւ զասպարնին,
զամէնն առեալ կողոպտեցին։
Դարձեալ խարած շատ մի առին,
չատոց զմորուքն կտրեցին,
փայտով զմարդիքն ջարդեցին,
զղուստր եւ զորդիքն ժողովեցին։
Զհաւըն զլուխն կտրեցին,
զորդիքն առին եւ գերեցին,
Անխնայ ժողովեցին,
զերկու եղբարքն ի մէկ տեղին։
Զնոր պըսակած հարսն ու փեսան,

լալով առին ի նալ դրին,
Հայրն ու մայրն շատ լացին,
եւ զլիւրաց ի հետ գնացին։
Նայ ճար չեղօ(աւ) չի խղճացին,
եւ ոչ լալուն ողորմէին,
Սրտերն եղեր էր գաղանի,
զանմեղ գառինքն ուտէին։
Առին տարան զատրըղանին,
լալով լըցին ի մէկ տեղին,
Տղայքն ամէն խիստ կուլի,
եւ հաց եւ ջուր կու կանչէին։
Ծընօղքն ամէն ժողովէին,
եւ կերակուր յուղարկէին,
Լալով նստին յեղեր ծովին,
ողորմ նային ի դէմ նավին։
Քառասուն աւր ի վերայ ծովին,
աղաղակն ի դէմ քաղքին,
Շատ աղչըկներ եւ ծառանին,
զամէնն առին ի մէկ տեղին,
Տասն հազար աղայս առին,
զարդ ըզճառայքն եւ զաղչըկնին։
Զպղըրկընէրն ժողովեցին,
զամէնն խիստ թալնեցին,
Շատ մի ուղաթ յառաջ տարին,
այնով չեղեւ բնութիւն չարին։
Զար հրամանք յառաջ հանին,
որ չի պահէր դումալ նոցին,
Ըզգանկակնին ժողովեցին,
մինչ ի Ռ (1000)ըն հասուցին։
Առեալ տարան յըմտամպօլին,
ի մեծ պարոնըն հասուցին,
Զժամու զաղաւթը խափանեցին,
Սանթայ Մարիամն որ կու գովին,
Ըզֆոռանկաց եկեղեցին,
այնայ մըղկիթ գայն արարին,
Զինչ որ Փրոանկ կայր քաղաքին,
զամէն Ստամպօլ առեալ տարին,
Զի նոր դարձուած ի հոն կացին,
զամէնն նոր տաճկացուցին,
Խիստ միտեցան եւ յետ կացին,
եւ անումիտ ի վայր մնացին։